



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. չորրորդ եռամսյակում /վերլուծություն/

2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 53033 գործարքներ, որոնց քանակը 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 6.2%-ով, իսկ 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 3.4%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13529 օտարման գործարքների 74.8%-ը կազմել են առուվաճառքները, 24.6%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 40.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.5%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2013թ. չորրորդ եռամսյակում, 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 2.7%-ով, իսկ 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 0.7%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 60.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. չորրորդ եռամսյակում, 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.2%-ով, իսկ 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 10.1%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Չորրորդ եռամսյակ 2012թ.	Չորրորդ եռամսյակ 2013թ.	Երրորդ եռամսյակ 2013թ.
Կենտրոն	420300	428000	428000
Արաբկիր	348200	356600	356300
Քանաքեռ-Զեյթուն	277000	282600	282400
Նոր-Նորք	241000	251900	251100
Ավան	249000	260000	259300
Էրեբունի	242000	250000	249000
Շենգավիթ	246700	255600	255100
Դավթաշեն	267700	275000	274700
Աջափնյակ	237400	248900	248100
Մալաթիա-Սեբաստիա	233100	241900	241100
Նուբարաշեն	143500	153900	152300
Միջինը Երևանում /բացի Նորք- Մարաշից/	264200	273100	272500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել են 0.2%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1326 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 5.8%-ով, իսկ 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 5.5%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Չորրորդ եռամսյակ 2012թ.	Չորրորդ եռամսյակ 2013թ.	Երրորդ եռամսյակ 2013թ
Արագածոտն	Աշտարակ	113700	115000	114900
	Ապարան	52000	57100	56600
	Թալին	61300	64900	64500
Արարատ	Արտաշատ	94100	95000	94800
	Մասիս	112000	115000	115000
	Վեդի	98100	99900	99800
	Արարատ	74300	75200	75100
Արմավիր	Վաղարշապատ	153200	154150	154100
	Արմավիր	119100	121200	121100
	Մեծամոր	86500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99000	99150	99100
	Գավառ	56200	59800	59100
	Մարտունի	107300	107600	107600
	Վարդենիս	40500	44700	44500
	Ճամբարակ	25000	28700	28100
Լոռի	Վանաձոր	87200	88400	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	53100	55000	55000
	Տաշիր	43800	47300	47000
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19800	20200	20200
Կոտայք	Աբովյան	153100	155100	155000
	Նոր Հաճն	128500	128600	128500
	Բյուրեղական	107100	108150	108100
	Եղվարդ	109300	109300	109300
	Հրազդան	61000	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	84000	85500	85500
Շիրակ	Գյումրի	109100	109300	109300
	Արթիկ	65000	66500	66500
	Մարալիկ	38400	40600	40200
Սյունիք	Գորիս	116000	121700	121600
	Կապան	90200	92200	92100
	Սիսիան	87200	91150	91100
	Մեղրի	73500	80700	80100
	Ագարակ	44000	46850	46200
	Քաջարան	94300	94650	94500
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	89900	95000	95000
	Եղեգնաձոր	118200	124800	124400
	Ջերմուկ	107600	112500	112000
Տավուշ	Դիլիջան	108200	113150	113100
	Իջևան	116000	118300	118200
	Բերդ	55600	60200	60100
	Նոյեմբերյան	44500	49900	49400
	Այրում	27100	31850	31600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2013թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել են 0.1%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1413 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 373, մարզերում միասին վերցրած՝ 1040: 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 3.5%-ով, ընդ որում, Երևանում նվազել՝ 5.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 7.2%-ով: 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.8%-ով, ընդ որում Երևանում՝ 14.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 5.1%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Չորրորդ եռամսյակ 2012թ.	Չորրորդ եռամսյակ 2013թ.	Երրորդ եռամսյակ 2013թ.
Կենտրոն	469100	476100	476100
Արաբկիր	376200	383000	383000
Քանաքեռ Զեյթուն	288100	295000	295000
Նորք Մարաշ	313100	319200	319200
Ավան	265700	270500	270500
Էրեբունի	233200	239500	239500
Շենգավիթ	250050	255000	255000
Դավթաշեն	269100	276000	276000
Աջափնյակ	243100	250050	250050
Մալաթիա Սեբաստիա	233200	238000	238000
Նուբարաշեն	146200	150500	150500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	280600	286600	286600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ մնացել է անփոփոխ :

2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Չորրորդ եռամսյակ 2012թ.	Չորրորդ եռամսյակ 2013թ.	Երրորդ եռամսյակ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	134900	136200	136200
	Ապարան	57000	60050	60000
	Թալին	68700	69250	69200
Արարատ	Արտաշատ	98700	100000	100000
	Մասիս	113800	115100	115100
	Վեդի	100600	102300	102300
	Արարատ	87400	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	152300	153100	153100
	Արմավիր	106500	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94200	94800	94800
	Գավառ	54600	57100	57100
	Մարտունի	94400	96100	96000
	Վարդենիս	37000	41000	41000
	Ճամբարակ	28000	31100	31100
Լոռի	Վանաձոր	98300	100000	100000
	Ստեփանավան	88100	90000	90000
	Սպիտակ	113600	114000	114000
	Այվերդի	48100	50200	50200
	Տաշիր	51200	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	13200	14000	14000
	Ախթալա	29600	30000	30000
Կոտայք	Աբովյան	154700	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120000	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	80800	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	82500	83000	83000
Շիրակ	Գյումրի	117600	118500	118500
	Արթիկ	62700	63100	63100
	Մարալիկ	50400	52000	52000
Սյունիք	Գորիս	127700	130000	130000
	Կապան	98400	100000	100000
	Սիսիան	91300	96500	96500
	Մեղրի	80300	84500	84500
	Ագարակ	46500	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11600
Վայոց Ձոր	Վայք	86700	90050	90000
	Եղեգնաձոր	115400	116600	116600
	Ջերմուկ	124900	131300	131200
Տավուշ	Դիլիջան	110000	113000	113000
	Իջևան	122000	123200	123100
	Բերդ	59000	60100	60000
	Նոյեմբերյան	46100	48300	48200
	Այրում	34600	36250	36200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.1 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 4409 միավոր /1868.86 հա/ հողեր, որից Երևանում՝ 460 միավոր /29.52 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2345 միավոր /1686.03 հա/, որից Երևանում՝ 21 միավոր /4.54 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1372 միավոր /119.32 հա/, որից Երևանում՝ 221 միավոր /7.27 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 533 միավոր /35.22 հա/, որից Երևանում՝ 194 միավոր /16.09 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 50 միավոր /8.61 հա/, որից Երևանում՝ 24 միավոր /1.61 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 33 միավոր /17.10 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 75 միավոր /1.94 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր /0.64 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. չորրորդ եռամսյակում օտարված հողերից 3639 միավորի /1544.39 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 386 միավոր /22.95 հա/, նվիրատվության գործարքներ՝ 734 միավորի /305.23 հա/, որից Երևանում՝ 67 միավոր /6.34 հա/ և փոխանակության գործարքներ՝ 36 միավորի /19.24 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.23 հա/:

Հանրապետությունում 2013թ. չորրորդ եռամսյակում 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.7%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 13.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.2%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 334.59 հա, որից 317.16 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.3%-ը կամ 920 գործարքներ /278.09 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 220 միավոր /6.70 հա/, իսկ 74.1%-ը կամ 2695 միավորը /1264.04 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 165 միավոր /16.11 հա/: 2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 24 գործարք /2.26 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	6	0.07	90	0.56	124	6.07	17	3.05	16	1.46	87	4.45	45	7.15
Արագածոտն	20	14.46	3	2.05	7	0.21	21	1.42	184	171.58	0	0.00	88	9.29	6	1.21
Արարատ	79	72.26	1	0.02	25	1.60	29	0.17	264	114.23	1	0.42	143	13.40	12	0.22
Արմավիր	15	33.27	1	0.13	18	1.46	10	0.25	325	283.90	0	0.00	152	15.45	8	0.13
Գեղարքունիք	5	19.77	1	0.02	21	1.82	22	0.58	314	157.34	2	0.25	46	6.35	4	0.46
Լոռի	13	3.90	3	0.12	14	0.12	30	0.63	96	54.01	1	2.00	32	3.29	3	0.05
Կոտայք	26	60.92	0	0.00	58	3.81	62	0.75	260	164.32	1	0.02	176	15.25	24	5.42
Շիրակ	2	4.86	0	0.00	18	0.45	9	0.62	98	103.42	1	1.10	43	5.14	5	0.32
Սյունիք	11	8.39	0	0.00	11	0.56	9	0.15	53	59.80	2	0.06	17	1.86	5	0.06
Վայոց Ձոր	7	20.92	3	0.11	0	0.00	3	0.78	35	15.66	0	0.00	7	0.56	6	0.32
Տավուշ	8	6.17	0	0.00	26	1.40	21	1.18	61	30.81	2	0.30	35	6.15	8	0.54
Ընդամենը	186	244.92	18	2.52	288	11.99	340	12.60	1707	1158.12	26	5.61	826	81.19	126	15.88

Ստորև ներկայացվում է 2013թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	159	3.20	6	0.07	90	0.56	63	2.57	61	3.49	0	0.00	0	0.00	0	0.00	61	3.49
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	50	17.83	19	14.15	3	2.05	7	0.21	21	1.42
Արարատ	7	0.03	1	0.02	0	0.00	6	0.01	122	68.13	74	66.37	0	0.00	25	1.60	23	0.16
Արմավիր	5	0.06	0	0.00	0	0.00	5	0.06	36	33.82	12	32.04	1	0.13	18	1.46	5	0.19
Գեղարքունիք	4	0.222	0	0.00	3	0.22	1	0.002	45	21.96	5	19.77	1	0.02	18	1.60	21	0.57
Լոռի	12	0.09	0	0.00	5	0.03	7	0.06	46	4.35	11	3.57	3	0.12	9	0.09	23	0.57
Կոտայք	4	0.32	0	0.00	4	0.32	0	0.00	140	64.85	24	60.61	0	0.00	54	3.49	62	0.75
Շիրակ	9	0.13	0	0.00	6	0.10	3	0.03	19	3.75	1	2.81	0	0.00	12	0.35	6	0.59
Սյունիք	12	0.48	0	0.00	8	0.45	4	0.03	18	5.42	10	5.19	0	0.00	3	0.12	5	0.11
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	21.23	5	20.34	3	0.11	0	0.00	3	0.78
Տավուշ	9	0.57	0	0.00	4	0.07	5	0.50	46	8.18	8	6.17	0	0.00	22	1.33	16	0.68
Ընդամենը	221	5.10	7	0.09	120	1.75	94	3.26	594	253.01	169	231.02	11	2.43	168	10.25	246	9.31

2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 17 գործարք /13.90 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. չորրորդ եռամսյակում, 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 24.7%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 60.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 28.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 22.8%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 37.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 13.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 50.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	8	4.31	104.7	972.8	375.3	115	83.08	365.0	12000.0	3565.6
Ապարան	1	0.20	380.0	380.0	380.0	24	18.92	86.5	2727.3	720.1
Թալին	9	9.34	37.7	200.0	138.1	28	32.96	93.6	5494.5	694.3
Ծաղկահովիտ	1	0.30	2220.0	2220.0	2220.0	12	28.22	79.5	1000.0	292.3
Արարատի մարզ										
Արտաշատ	19	4.34	75.9	3100.3	1391.6	138	44.68	335.1	10833.3	2686.9
Մասիս	15	22.79	68.8	4161.1	1676.1	42	33.91	200.0	11904.8	3032.8
Վեդի	40	39.23	59.6	747.6	138.5	81	34.37	207.0	10795.1	1853.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	4	10.08	70.5	2205.0	829.6	162	113.78	294.3	9090.0	1258.4
Բաղրամյան	3	21.03	67.5	70.9	69.2	63	78.91	90.6	2561.1	774.6
Վաղարշապատ	5	0.93	60.8	1891.9	982.6	83	37.41	444.4	11764.7	2234.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						214	65.15	199.8	1875.0	430.1
Ճամբարակ						1	10.00	60.5	953.3	355.2
Մարտունի	1	0.05	668.0	668.0	668.0	43	6.43	51.1	2850.0	742.8
Սևան	1	0.60	124.5	124.5	124.5	23	14.80	52.2	2134.8	324.5
Վարդենիս	3	19.12	44.0	678.7	361.4	26	53.60	41.2	2575.1	419.0
Լոռու մարզ										
Ալավերդի	3	0.39	281.4	3762.0	2144.8	25	13.64	170.4	6424.2	567.5
Գուգարք						27	5.80	234.6	6065.9	783.5
Սպիտակ								250.0	5555.5	730.8
Ստեփանավան	8	3.17	184.7	747.3	446.4	8	10.96	90.6	1686.6	338.7
Տաշիր						32	17.81	45.3	1384.4	166.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	9	6.46	100.9	2396.2	618.2	92	44.17	279.3	11942.7	4118.9
Եղվարդ	11	50.47	76.5	1754.5	740.9	99	92.71	174.4	11971.8	2443.4
Հրազդան	4	3.68	44.1	923.9	277.9	69	27.45	130.5	10256.4	1489.1
Շիրակի մարզ										
Ախուրյան						38	33.52	252.0	1693.1	630.0
Ամասիա	1	2.81	154.0	154.0	154.0	2	11.50	40.9	261.0	126.1

Անի						36	44.91	110.6	546.9	401.1
Աշոցք								58.5	215.8	130.0
Արթիկ						22	13.48	79.4	1428.6	432.7
Սյունիքի մարզ										
Գորիս	4	1.91	500.0	500.0	500.0	4	3.97	92.6	1023.2	738.0
Կապան	5	3.26	488.3	1785.0	1043.0	5	2.11	120.0	841.6	370.6
Մեղրի	1	0.02	41000.0	41000.0	41000.0	9	0.99	193.0	3000.0	736.0
Սիսիան						35	52.74	46.3	1977.4	555.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	14.52	68.8	328.6	122.2	12	3.82	125.0	10000.0	1933.3
Վայք	1	5.82	38.8	38.8	38.8	22	11.72	58.8	1430.7	639.8
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.20	1775.0	1775.0	1775.0	12	3.15	213.3	3783.8	687.0
Իջևան	5	4.12	155.7	4583.3	1938.6	15	11.80	267.5	9454.5	1246.8
Նոյեմբերյան	2	1.85	219.3	1320.0	769.6	34	15.86	46.7	7368.4	905.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասվելագույն	Միջին			Նվազագույն	Մասվելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	127.7	3600.0	4040.4	3824.6	72	68622.0	130.7	22200.0	2581.5
Ապարան						7	8373.0	124.1	609.6	390.0
Թային	2	1945.0	75.6	158.8	117.2	6	11260.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	2815.0	60.0	214.3	92.0
Արարատի մարզ										
Արտաշատ	10	9929.3	268.1	5308.3	917.5	40	42495.9	173.9	7140.3	898.3
Մապիս	7	1541.8	841.3	3565.0	2217.2	61	38262.8	187.5	25000.0	1206.2
Վեդի	8	4509.4	645.8	1612.9	773.6	42	53252.3	126.1	5000.0	660.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	5222.9	316.9	4116.0	2537.6	65	75737.4	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						3	3640.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	12	9381.0	315.0	3151.3	1156.7	82	72725.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	4411.0	268.4	280.2	273.8	6	7548.2	186.6	1084.3	683.3
Ճամբարակ						1	1756.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	10	8918.0	113.8	330.0	226.9	29	41910.3	119.3	5000.0	281.4
Սևան	4	2662.0	127.8	714.2	442.4	4	3651.0	240.0	3110.4	320.0
Վարդենիս						2	4091.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	4	141.4	1100.0	1650.0	1512.5	9	11294.0	114.3	1388.9	217.0
Գուգարք	4	755.0	2106.0	2940.0	2309.0	10	6681.6	77.9	14083.3	1259.6
Սպիտակ						10	9593.3	104.9	1348.3	206.5
Ստեփանավան						3	5306.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	1	30.0	622.0	622.0	622.0			45.3	400.0	90.0

Կոտայքի մարզ										
Աբովյան	50	32327.0	285.0	5441.2	2030.2	66	53064.8	264.5	35353.5	1991.4
Եղվարդ	3	2088.5	230.0	5062.5	2245.5	98	86066.5	173.6	27000.0	2859.3
Հրազդան	1	490.0	4750.2	4750.2	4750.2	11	12600.0	117.7	34848.5	1317.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	7	1682.6	1150.0	4182.6	1966.0	19	14178.2	113.6	18750.0	334.5
Ամասիա	2	629.0	165.2	165.4	165.3	2	8330.0	45.3	274.7	71.0
Անի	3	1200.0	346.8	349.3	348.1	7	8730.0	67.9	180.6	178.2
Աշոցք								40.8	144.0	64.0
Արթիկ						14	20133.8	111.8	5000.0	217.7
Սյունիքի մարզ										
Գորիս	1	902.0	425.3	425.3	425.3	6	7881.0	112.2	1700.0	367.0
Կապան	2	270.8	244.2	1890.6	1067.0	3	1790.0	67.9	2638.9	306.7
Մեղրի						3	2090.0	68.5	632.9	218.0
Սիսիան						5	6850.0	123.5	875.0	215.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						6	4230.0	96.7	7659.6	505.5
Վայք						1	1365.0	120.7	1448.3	226.0
Տավուշի մարզ										
Բերդ						4	5994.0	75.8	810.0	121.0
Իջևան	17	8856.1	151.3	3000.0	2108.6	28	51292.4	74.1	14423.1	510.8
Նոյեմբերյան	5	4428.0	176.0	1650.9	939.9	3	4175.0	125.0	1948.1	230.0

2013թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2215 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.2%:

2013թ. չորրորդ եռամսյակում, 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 5.5%-ով, իսկ 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 15.2%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 131 բնակարանների, 251 անհատական բնակելի տների, 956 հասարակական նշանակության, 254 արտադրական նշանակության օբյեկտների, 577 միավոր /1045.30 հա/ հողերի, 2 այգետնակների և 44 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 38 վարձակալության գործարքների, այդ թվում 15 միավոր /0.41 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 46.2%-ով, իսկ 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 81.0%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 1045.30 հա հողերից 4.84 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1040.47 հա հողերից 1003.84 հա գյուղատնտեսական նշանակության, 12.04 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.32 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Կոտայքի մարզում՝ 266.86 հա, որից 265.06 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7301 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.8%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 15.9%-ով, իսկ 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 12.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.5%/, առանձնատների /25.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.8%/ և հողերի /7.2%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3905 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 4.4%-ով, իսկ 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 16.3%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 1268.79 հա հողեր, որից 43.98 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 92.5%-ը կամ 1173.63 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.78 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 699.44 հա, որից 697.24 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 534 գործարքներ, որից 358-ը՝ Երևանում: 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 3.4%-ով, ընդ որում Երևանում՝ 9.8%-ով, մարզերում միասին վերցրած աճել՝ 12.8%-ով, իսկ 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.4%-ով, ընդ որում Երևանում աճել՝ 0.8%-ով, մարզերում միասին վերցրած նվազել՝ 0.6%-ով:

2013թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5956 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 16.4%-ով, իսկ 2012թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 19.6%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /27.9%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե